ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍՆ ,ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱ Ն ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա՝ ԹԳՀԳ

Մասնակից՝ Բաղդասարյան Գոհարիկ

Թեմա՝ ″Հեղինակային իրավունք և լիցենզիաներ″

Ղեկավար՝ Կոստանդյան Գայանե

ԵՐԵՎԱՆ 2023թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ԹԵՄԱ 1 5
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ 5
¢ 1.1 ԻՆՉ Է ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ 5
¢ 1.2. ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ[..... 7
¢ 1.3. ՀԵՂԻՆԱԿ 8
¢ 1.4. ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ Է 10
¢ 1.5. ԳՐԱԳՈՂՈՒԹՅՈՒՆ 13
ԹԵՄԱ 2 ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐ 14
¢ 2.1. ԱԶԱՏ ԿԱՄ ԲԱՑ ԼԻՑԵՆԶԻԱ 15
¢ 2.2. ԱԶԱՏ (ԲԱՑ) ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԱՌԱՁԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ 16
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 17
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքի արդիականությունը; Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն առարկայով փոխանցվող հմտությունները, գիտելիքը և ուսումնառության գործողությունները խիստ կարևոր են աշակերտների անձնական և քաղաքացիական կյանքի արդյունավետությունը բարձրացնելու համար: Այս գիտելիքները և հմտությունները հավասարապես կարևոր են անկախ նրանից թե ինչ ոլորտում է մասնագիտանալու աշակերտն ապագայում՝ տրանսպորտից մինչև զվարճանքների և արվեստի ոլորտներ, էներգետիկայից մինչև կենսաքիմիական գիտություններ, բիզնեսից և արտադրությունից մինչև առողջապահություն, ֆիզիկա, քիմիա, և բնապահպանական գիտություններից մինչև հետազոտությունների զանազան ոլորտներ: Դրանք կարևորն են ինչպես անձնական այնպես էլ քաղաքացիական կյանքին առնչվող որոշումներ կայացնելիս, հեռախոսների օգտագործումից մինչև ավտոկայանատեղիների դռները և տեխնոլոգիական համակարգերը որոնք առկա են տարբեր համայնքներում:

Հետազոտական աշխատանքի նպատակը Առարկաի ուսուցման նպատակը Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն առարկայի գիտելիքային հիմքը, դրանով փաստարկման կարողությունը և դրա ընթացքում ձևավորվող ու զարգացող հմտությունները խիստ անհրաժեշտ են սովորողին 21րդ դարում արդյունավետ անձնական և քաղաքացիական կյանքով ապրելուն նախապատրաստելու համար: Այս առարկայի միջոցով մենք կպատրաստենք և կոգևորենք առավել մեծ թվով աշակերտների ընտրել ապագայի նորարարական և ստեղծագործական մասնագիտություններ: Բարդ խնդիրներ լուծելու համար արդյունավետ կերպով տեխնոլոգիայի օգտագործումը և դրա ստեղծումը 21րդ դարում համարվում են գրագիտության նոր և հիմնական հմտություններից մեկը: Թվային գրագիտությունը և համակարգչային գիտություն առարկայի չափորոշիչները արտահայտում են այն առանցքային և կարևոր ուսումնառության վերջնարդյունքները,

որոնք անհրաժեշտ են տարրական դպրոցի երկրորդ դասարանից մինչև ավագ դպրոցի տասներկուերորդ դասարանների աշակերտներին՝ կյանքում հաջողությունների հասնելու համար: Չափորոշիչները ներկայացնում են թվային գրագիտության և համակարգչային գիտության առանցքային տարրերը և նպատակ ունեն ուղղորդել համահունչ և խստապահանջ դասավանդումը, որի արդյունքում աշակերտները վարպետորեն կտիրապետեն և կկիրառեն առարկայի շրջանակներում ծածկվող գիտելիքը, փաստարկումները և հմտությունները:

Հետազոտական աշխատանքի խնդիրները:

1. Վերլուծել մոտիվացիայի էությունը
2. Ցույց տալ միջին դպրոցում ուսումնական մոտիվացիայի առանձնակատկությունները
3. Ցույց տալ թեմայի կարևորությունը ապագա քաղաքացու ձևավորման գործում
4. Հետազոտական աշխատանքի հիման վրա գրվել է եզրակացություն

Հետազոտական աշխատանքի կառուցվածքը Հետազոտական աշխատանքը կազմված է ներածությունից, երկու թեմայից, յոթ պարագրաֆից, եզրակացությունից, օգտագործված գրականությունից և բովանդակությունից:

ԹԵՄԱ 1

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

¢ 1.1 ԻՆՉ Է ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Հեղինակային իրավունքը հեղինակներին օրենքով տրվող պահպանությունն է, ինչը նրանց՝ իրենց ստեղծագործությունները վերահսկելու իրավունք է տալիս: Հեղինակային իրավունքի մասին օրենքը հիմնված է այն համոզմունքի վրա, որ ստեղծագործության հեղինակն արժանի է ողջամիտ փոխհատուցում ստանալու և իրենց ստեղծագործության օգտագործման նկատմամբ վերահսկողության իրավունք ունենալու:Հայաստանում հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին օրենքն Ազգային Ժողովի կողմից ընդունվել է 2006 թվի հունիսի 15-ին: ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը նույնպես հեղինակային իրավունքի մասին դրույթներ է պարունակում /բաժին 10, հոդվածներ 1100-1143/:

Մասնավորապես, ՀՀ հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է, որ հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների վերաբերյալ օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, ՀՀ քաղաքացիական օրենսգրքից, ՀՀ հեղինակային իրավունքի մասին օրենսդրությունից, այլ օրենքներից և իրավականակտերից, ՀՀ միջազգային համաձայնագրերից:

Հեղինակային իրավունքի հասկացությունը ծագել է Բրիտանիայում 1710 թվականին Աննայի օրենքով: Այն սահմանել է աշխատանքի հեղինակի՝ աշխատանքը բազմացնելու իրավունքի սեփականատեր լինելն ու այդ հեղինակային իրավունքի համար ֆիքսված տերմինի հասկացությունը: Այն ստեղծվել է որպես ուսումը խրախուսող ակտ, քանի որ այդ ժամանակներում նկատվել էր, որ հրատարակիչները վերատպում են հեղինակների աշխատանքներն առանց նրանց համաձայնության՝ մեծ վնաս պատճառելով նրանց և հաճախ կործանելով նրանց ու նրանց ընտանիքները: Այդ առումով հեղինակային իրավունքը, նախևառաջ, ստեղծվել էր այն նպատակով, որ

հեղինակները որոշակի վերահսկողություն ունենան իրենց աշխատանքների տպագրության նկատմամբ և ստանան որոշակի ֆինանսական փոխհատուցում, որպեսզի դա խթանի նրանց գրելու նոր գրքեր և, այդպիսով, նպաստի մտքերի և ուսման հոսքին: Ինչպես նշվում է բուն ակտում՝ ուսյալ մարդկանց խրախուսելու նպատակով, որպեսզի նրանք կազմեն ու գրեն օգտակար գրքեր:

Աննայի օրենքը հեղինակային իրավունքի մասին առաջին իսկական օրենքն էր, և այն իրավունքներ տվեց հեղինակներին սահմանափակ ժամանակով՝ տասնչորս տարով, բոլոր հրատարակված աշխատությունների համար, որից հետո հեղինակային իրավունքի ժամկետը լրանում էր: Հեղինակային իրավունքը գրքերի և քարտեզների հրատարակման իրավունքը կարգավորող իրավական ակտից վերաճել է մի օրենքի, որն ազդում է ժամանակակից գրեթե բոլոր արտադրությունների վրա՝ ձայնագրություններից մինչև ֆիլմեր, լուսանկարներ, համակարգչային ծրագրային ապահովում ու ճարտարապետական աշխատանքներ: Հետագայում ԱՄՆ սահմանադրության հեղինակային իրավունքին վերաբերող հոդվածը (1878 թ.) սկզբնավորեց հեղինակային իրավունքին վերաբերող օրենսդրությունը՝ Գիտության առաջընթացին նպաստելու համար... սահմանափակ ժամանակով ապահավելով հեղինակների... բացառիկ իրավունքն իրենց... աշխատանքների նկատմամբ:

¢ 1.2. ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ[

Մինչև խորհրդային իշխանության հաստատումը Հայաստանում հեղինակային իրավունքները գրավոր կերպով ամրագրված չեն եղել։ Արդեն Խորհրդային իշխանության տարիներին Հայաստանում հեղինակային իրավունքները կարգավորվում էին Մոսկվայում ստեղծված Հեղինակների իրավունքների պահպանության համամիութենական վարչության միջոցով (ՎՈՒՕԱՊ, ստեղծված 1937 թ. դեկտեմբերին) և դրա հայկական մասնաճյուղի միջոցով, որը գործեց մինչև 1992 թ. ։ Այս տարիներին գրքերը հրատարակվում էին կուսակցական վերահսկողության ներքո և պետությունը այս ոլորտում ուներ բացառիկ մենաշնորհ ։ Հայաստանի պատմության մեջ հեղինակային իրավունքը կարգավորող առաջին փաստաթուղթը 1930 թվականին ընդունված «Հեղինակի իրավունքի կանոնադրություն»-ն էր։ Հետագայում հեղինակային իրավունքին վերաբերող նորմերը ամրագրվել են նաև ՀՍՍՀ Քաղաքացիական օրենսգրքում՝ առանձին գլխով։ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո հրատարակչական գործունեությունը դասվեց ազատ գործունեության տեսակների շարքում։ 1993 թվականին հեղինակների իրավունքների պաշտպանությունը իրականացնելու նպատակով ստեղծվեց ՀՀ Կառավարությանն առընթեր Հեղինակային իրավունքների ազգային գործակալությունը (ՀԻԱԳ), որը իր գործունեությունը ծավալեց մինչև 2002 թվականը։ Նորանկախ ՀՀ-ն 1993 թվականից դարձավ Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (WIPO) անդամ։ 1996 թվականին Ազգային ժողովի կողմից ընդունվեց ՀՀ օրենքը «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», որը հետագայում փոփոխվել է 2 անգամ։ Բացի այս օրենքից, ներկայումս ՀՀ-ում հեղինակային օրենքը պաշտպանելու նպատակով ընդունվել են մի շարք ներպետական իրավական ակտեր։

¢ 1.3. ՀԵՂԻՆԱԿ

Հեղինակ է ճանաչվում այն ֆիզիկական անձը, ով ստեղծել է ստեղծագործությունը։ Անձին հեղինակ ճանաչելու համար էական չէ նրա տարիքը, սեռը կամ քաղաքացիությունը[1]։ Հայաստանում գործում է հեղինակության կանխավարկածը, այն է՝ հեղինակ է ճանաչվում այն անձը, ում անունը որպես հեղինակ նշված է ստեղծագործության վրա, իսկ եթե ստեղծագործությունը լույս է ընծայվում անանուն կամ կեղծանունով՝ լույս ընծայող անձը համարվում է հեղինակի ներկայացուցիչ և իրավասու է պաշտպանելու հեղինակի իրավունքները։ Կարող են լինել այնպիսի դեպքեր, երբ մեկ ստեղծագործության վրա աշխատել են երկու կամ ավելի հեղինակներ. այդ դեպքում ստեղծագործության նկատմամբ առաջանում է համահեղինակություն, ընդ որում՝ նշանակություն չունի՝ ստեղծագործությունը մեկ անբաժանելի ամբողջություն է, թե՝ բաղկացած է առանձին մասերից։ Առանձնահատկությունը կայանում է նրանում, որ ամբողջական ստեղծագործության դեպքում այն օգտագործելու իրավունքը պատկանում է համահեղինակներին համատեղ, նրանց միջև կարող է կնքվել պայմանագիր, իսկ ստացվող եկամուտը նրանց միջև բաշխվում է հավասար։ Համահեղինակներից ոչ մեկն իրավունք չունի մյուս համահեղինակներին արգելել ստեղծագործության օգտագործումը՝ առանց հիմնավոր պատճառի։ Եթե ստեղծագործությունը բաղկացած է առանձին մասերից, ապա հեղինակն իրավունք ունի իր մասն օգտագործելու իր հայեցողությամբ։

Հեղինակային իրավունքի առաջնային սուբյեկտը՝ հեղինակը, հետագայում կամավոր կարող է իր բացառիկ գույքային իրավունքները փոխանցել կամ զիջել այլ անձանց, ովքեր հեղինակից ձեռք բերելով այդ իրավունքները դառնում են ստեղծագործության նկատմամբ հեղինակի իրավունքի իրավատեր։ Հեղինակի մահից հետո օրենքով սահմանված ժամկետի ընթացքում հեղինակի գույքային իրավունքներն

անցնում են նրա ժառանգներին: Այսպիսով, ստեղծագործության նկատմամբ բացառիկ գույքային իրավունքի սուբյեկտ կարող են լինել՝

- ստեղծագործության հեղինակը,
- հեղինակի մահից հետո՝ նրա ժառանգները,
- այլ ֆիզիկական և իրավաբանական անձինք, ովքեր օրենքով սահմանված կարգով ձեռք են բերում ստեղծագործության նկատմամբ բացառիկ գույքային իրավունքներ:

¢ 1.4. ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ Է

Հեղինակային իրավունքը կարգավորում է ստեղծագործությունների ստեղծման և օգտագործման կապակցությամբ առաջացող հարաբերությունները։ Այն մարդու հետ անխզելիորեն կապված իրավունքներից մեկն է, որի պաշտպանությունը ամրագրված է մի շարք ներպետական և միջազգային ակտերով։ «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր»-ը, ամրագրելով մարդկանց ի ծնե պատկանող իրավունքները, սահմանում է յուրաքանչյուրի՝ մշակութային կյանքին ազատորեն մասնակցելու, գիտական առաջընթացին մասնակցելու և դրա բարիքներից օգտվելու, իր հեղինակած գիտական, գրական կամ գեղարվեստական աշխատանքի բարոյական և նյութական շահերի պաշտպանության իրավունքները։

Օրենսդրության մեջ հեղինակային իրավունքը ընդգրկված է մտավոր սեփականությանն ինստիտուտի մեջ։ Հեղինակային իրավունքը ծագում է մարդու մտավոր գործունեության արդյունքում ստեղծագործության ստեղծման փաստով։ Ստեղծագործությունը համարվում է ստեղծված, եթե այն արտահայտված է ընկալելու հնարավորություն թույլատրող որևէ օբյեկտիվ ձևով։ Այն տարածվում է ինչպես արդեն իսկ հրապարակված, այնպես էլ դեռևս չհրապարակված ստեղծագործությունների վրա։ Ընդ որում, հեղինակային իրավունքները պաշտպանվում են անկախ ստեղծագործության ծավալից, նշանակությունից, արժանիքներից ու ստեղծման նպատակից։ Այսինքն՝ կարևոր չէ, որ այն ավարտուն տեսք ունենա։ Հեղինակային իրավունքների ծագման համար որևէ նշանակություն չունի ստեղծագործության ձևը. այն կարող է լինել գրավոր, բանավոր կամ արտահայտվել որևէ այլ ընկալելու հնարավորություն թույլ տվող օբյեկտիվ ձևով։ Հեղինակային իրավունքը ծագում է առանց որևէ գրանցման կամ այլ գործողության։ Իրավական համակարգերի մեծ մասը ճանաչում է հեղինակային իրավունքի սահմանափակումները՝ թույլատրելով դրանց ազատ օգտագործումը։

Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն առարկայի գիտելիքային հիմքը, դրանով փաստարկման կարողությունը և դրա ընթացքում ձևավորվող ու զարգացող հմտությունները խիստ անհրաժեշտ են սովորողին 21րդ դարում արդյունավետ անձնական և քաղաքացիական կյանքով ապրելուն նախապատրաստելու համար։ Այս առարկայի միջոցով մենք կպատրաստենք և կոգևորենք առավել մեծ թվով աշակերտների ընտրել ապագայի նորարարական և ստեղծագործական մասնագիտություններ։ Բարդ խնդիրներ լուծելու համար արդյունավետ կերպով տեխնոլոգիայի օգտագործումը և դրա ստեղծումը 21րդ դարում համարվում են գրագիտության նոր և հիմնական հմտություններից մեկը։ Թվային գրագիտությունը և համակարգչային գիտություն առարկայի չափորոշիչները արտահայտում են այն առանցքային և կարևոր ուսումնառության վերջնարդյունքները, որոնք անհրաժեշտ են տարրական դպրոցի երկրորդ դասարանից մինչև ավագ դպրոցի տասներկուերորդ դասարանների աշակերտներին՝ կյանքում հաջողությունների հասնելու համար։ Չափորոշիչները ներկայացնում են թվային գրագիտության և համակարգչային գիտության առանցքային տարրերը և նպատակ ունեն ուղղորդել համահունչ և խստապահանջ դասավանդումը, որի արդյունքում աշակերտները վարպետորեն կտիրապետեն և կկիրառեն առարկայի շրջանակներում ծածկվող գիտելիքը, փաստարկումները և հմտությունները։ Առարկայի արդիականությունը Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն առարկայով փոխանցվող հմտությունները, գիտելիքը և ուսումնառության գործողությունները խիստ կարևոր են աշակերտների անձնական և քաղաքացիական կյանքի արդյունավետությունը բարձրացնելու համար։ Այս գիտելիքները և հմտությունները հավասարապես կարևոր են անկախ նրանից թե ինչ ոլորտում է մասնագիտանալու աշակերտն ապագայում՝ տրանսպորտից մինչև զվարճանքների և արվեստի ոլորտներ, էներգետիկայից մինչև կենսաքիմիական գիտություններ, բիզնեսից և արտադրությունից մինչև առողջապահություն, ֆիզիկա, քիմիա, և բնապահպանական գիտություններից մինչև հետազոտությունների զանազան ոլորտներ։ Դրանք կարևորն են ինչպես անձնական

այնպես էլ քաղաքացիական կյանքին առնչվող որոշումներ կայացնելիս, հեռախոսների օգտագործումից մինչև ավտոկայանատեղիների դռները և տեխնոլոգիական համակարգերը որոնք առկա են տարբեր համայնքներում:

Հեղինակային իրավունքի խորհրդանշանն է լրիվ շրջանի մեջ վերցված հակառակ «c»-ն: Դա հեղինակային իրավունքի խորհրդանշանի հայելային արտացոլումն է: Հեղինակային իրավունքն արտոնագրման ձև է և կարող է կիրառվել այնպիսի աշխատանքների հեղինակային իրավունքները փոփոխելու համար, ինչպիսիք են համակարգչային ծրագրակազմերը, փաստաթղթերը, երաժշտությունն ու կերպարվեստը: Ընդհանուր առմամբ, հեղինակային իրավունքն արգելում է ուրիշներին վերարտադրել, հարմարեցնել կամ բաշխել հեղինակի աշխատանքի պատճենները: Ի հակադրություն՝ հեղինակը կարող է հեղինակային իրավունքի արտոնագրման միջոցով իր աշխատանքի օրինակը ստացած ցանկացած անձի թույլատրել վերարտադրելու, հարմարեցնելու կամ բաշխելու աշխատանքը, եթե արդյունքում ստացվող օրինակները կամ հարմարեցումները նույնպես ենթարկվում են նույն հեղինակային իրավունքի սկզբունքներին: Լայնորեն կիրառվող հեղինակային իրավունքի արտոնագրման օրինակ է GNU հանրային արտոնագրումը (GNU General Public License): Նման արտոնագիր է տրամադրում նաև Creative Commons-ը, որը կոչվում է ShareAlike:

¢ 1.5. ԳՐԱԳՈՂՈՒԹՅՈՒՆ

Գրագողություն է, երբ առանց հեղինակին հղում կատանելու օգտագործում են տվյալ հեղինակի մտավոր աշխատանքը։ Գրագողությունը կամ հեղինակային իրավունքի խախտումը նույնպես համարվում է քրեորեն պատժելի արարք և կարգառրվում է Հայաստանի Քրեական օրենսգրքի 158-րդ հոդվածով, այն է՝ «Հեղինակային կամ հարակից իրավունքի օբյեկտն ապօրինի օգտագործելը կամ հեղինակությունը յուրացնելը, եթե այդ արարքը խոշոր վնաս է պատճառել, պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքով՝ առավելագույնը երկու տարի»։

ԹԵՄԱ 2 ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐ

1. Թույլատրություն., գյուտի օգտագործման լիցենզիա
2. Այլ անձանց կամ կազմակերպություններին տրվող իրավունք՝ որոշակի ժամանակաշրջանի ընթացքում պայմանավորված վարձատրության դիմաց օգտագործելու պատենտներով պաշտպանված գյուտերը, տեխնոլոգիաները, տեխնիկական գիտելիքները և արտադրման փորձը, արտադրության գաղտնիքները, ապրանքանիշը, արտադրության համար անհրաժեշտ առևտրային և այլ տեղեկատվությունը
3. և այլն

Լիցենզիաները լինում են տարբեր բնույթի՝ Շինարարության լիցենզիա, Բժշկական լիցենզիա, Բիզնեսի լիցենզիա և այլն

¢ 2.1. ԱԶԱՏ ԿԱՄ ԲԱՑ ԼԻՑԵՆԶԻԱ

Ազատ կամ բաց լիցենզիան համաձայնություն է, որով մտավոր գործունեության արդյունքի կամ անհատականացման միջոցի նկատմամբ բացառիկ իրավունք ունեցող կողմը (լիցենզատուն) պարզեցված կարգով մյուս կողմին (լիցենզառուին) թույլատրում է ոչ բացառիկ ձևով օգտագործել մտավոր սեփականության համապատասխան օբյեկտը:

Ազատ (բաց) լիցենզիան հեղինակի գույքային իրավունքների օտարման միջոց է: Հեղինակային իրավունքը հանդիսանում է մտավոր սեփականության ինստիտուտներից մեկը: Հեղինակային իրավունքի նորմերով կարգավորվում են գիտության, գրականության, արվեստի երկերի ստեղծման և օգտագործման կապակցությամբ առաջացող (գույքային և անձնական ոչ գույքային) հարաբերությունները: Սակայն ազատ (բաց) լիցենզիայի նկատմամբ կիրառելի չեն այն սկզբունքները, որոնք կիրառելի են հեղինակային պայմանագրի և լիցենզիայի պայմանագրի նկատմամբ:

Ազատ (բաց) լիցենզիան կարգավորված չէ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով: Վերջինիս վերաբերյալ կարգավորում կա ՌԴ քաղաքացիական օրենսգրքում՝ ի ղեկավարումն 1286.1 հոդվածի[1]:

¢ 2.2. ԱԶԱՏ (ԲԱՑ) ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Թվային տեխնոլոգիաների առաջացումը, զարգացումը մեծապես փոխեց հասարակական հարաբերություններում մասնակիցների մասնակցության ձևը, միջոցները և նախկինում ընդունելի պատկերացումները: Այդ փոփոխությունները ընդգրկեցին հասարակական հարաբերությունների լայն շրջանակ և հետևանք հանդիսացան հասարակական հարաբերությունների նոր ձևերի առաջացման: Այս համատեքստում թվային տեխնոլոգիաները և, մասնավորապես, համացանցը փոխեց գիտելիքի և մշակույթի՝ իրավական, տնտեսական և սոցիալական հասանելիությունը և օգտագործումը: Մարդկության պատմության մեջ առաջին անգամ ստեղծվեց մի գործիք, որը հիմք հանդիսացավ գիտելիքի և մշակույթի միասնական բազայի ստեղծման և գործարկման համար, մի հարթակ, որտեղ մարդկությանը հնարավորություն ընձեռնվեց հասանելի լինել գիտելիքի և մշակույթի հնարավոր անսահմանափակ ռեսուրսներին:

Թվային տեխնոլոգիաները փոխեցին ոչ միայն հեղինակային իրավունքի օբյեկտների արտահայտման ձևերը, օգտագործման և տարածման միջոցները, այլև՝ իրավատերերի, հեղինակների, օգտագործողների վարքագիծը: Համացանցը օգտագործողները կամա, թե ակամա դառնում են հեղինակային իրավունքի օբյեկտների ակտիվ տարածողներ: Վերջիններս ոչ միայն կարողանում են ազատորեն տարածել հեղինակային իրավունքի օբյեկտ հանդիսացող կոնտենտը, վերարտադրել այդպիսի օբյեկտները, այլև, որոշակի մանիպուլյացաների ենթարկելով, փոխել այդ օբյեկտները, ստեղծել նոր օբյեկտներ: Նշվածի պայմաններում վերանում է ոչ միայն հեղինակների և օգտագործողների միջև գոյություն ունեցած սահմանը, այլև հեղինակային իրավունքի օբյեկտների մասնավոր և հասարակական օգտագործման միջև եղած սահմանը:

Կատարվել է տեստային հետազոտություն https://forms.gle/Bcn897zo5tFG7bkp6

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

՛՛Հեղինակային իրավունքներ և Լիցենզիաներ՛՛ թեմայով փոխանցվող հմտու--թյունները, գիտելիքը և ուսումնառության գործողությունները խիստ կարևոր են աշակերտների անձնական և քաղաքացիական կյանքի արդյունավետությունը բարձրացնելու համար: Այս գիտելիքները և հմտությունները հավասարապես կարևոր են անկախ նրանից թե ինչ ոլորտում է մասնագիտանալու աշակերտն ապագայում՝ տրանսպորտից մինչև զվարճանքների և արվեստի ոլորտներ, էներգետիկայից մինչև կենսաքիմիական գիտություններ, բիզնեսից և արտադրությունից մինչև առողջապահություն, ֆիզիկա, քիմիա, և բնապահպանական գիտություններից մինչև հետազոտությունների զանազան ոլորտներ: Դրանք կարևորն են ինչպես անձնական այնպես էլ քաղաքացիական կյանքին առնչվող որոշումներ կայացնելիս, հեռախոսների օգտագործումից մինչև ավտոկայանատեղիների դռները և տեխնոլոգիական համակարգերը որոնք առկա են տարբեր տեղերում:

Թեմայով ձևավորվող ու զարգացող հմտությունները խիստ անհրաժեշտ են սովորողին 21րդ դարում արդյունավետ անձնական և քաղաքացիական կյանքով ապրելուն նախապատրաստելու համար: Այս թեմայի միջոցով մենք կպատրաստենք առավել մեծ թվով աշակերտների, որոնք գրագետ կերպով ապագայում կկարողանան կազմակերպել իրենց գործունեությունը, վարպետորեն կտիրապետեն և կկիրառեն թեմայի շրջանակներում ուսուցանվող գիտելիքը, փաստարկումները և հմտությունները, կյանքում հաջողությունների հասնելու համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Թվային Գրագիտություն և Համակարգչային Գիտություն առարկայի չափորոշչային վերջնարդյունքներ: Հայեցակարգ
2. Վիկիպեդիա ազատ հանրագիտարան
3. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք բաժին 10, հոդվածներ 1100-1143: